ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԿՈԼԻԿԱՆԵՐ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԿՈԼԻԿԱՆԵՐ

Նորածնային կոլիկան սկսվում է կյանքի առաջին 2-4 շաբաթներին և կարող է շարունակվել մինչև 3-4 ամսականը: Ամեն հինգերորդ երեխան նորածնային կոլիկա է ունենում:

Սովորաբար այն դիտվում է երեկոյան ժամերին և կարող է տևել մինչև 3 ժամ:

Ի՞նչ նշաններով է դրսևորվում.

- երեխան կրկնվող լացի դրվագներ է ունենում (լացն անմխիթար է, բավական ուժեղ),
- լացի ընթացքում դեմքը կարմրում է, թաթիկները բռունցք է անում,
- ոտիկները ձգում է կամ մոտեցնում է փորին,
- ոտիկները ձգելու ընթացքում երբեմն կարող են գազիկներ դուրս գալ:

Կոլիկայի պատճառն անհայտ է: Կարծիք կա, որ որոշ երեխաներ գերզգայուն են արտաքին ազդակների հանդեպ. նրանց նյարդային համակարգը դեռևս բավարար հասուն չէ և ինքնակառավարում չի կարողանում իրականացնել:

Նորածնային տարիքում երեխայի արտահայտված լացի պատճառ կարող են լինել նաև որոշ հիվանդություններ, ուստի մանկաբույժի կողմից այլ խնդիրների ժխտումից հետո միայն կարելի է խոսել նորածնային կոլիկայի մասին:

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԿՈԼԻԿԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

- Երեխային կարող է հանգստացնել ծնողների մեղմ խոսքը կամ երգը:

- Ծնողների ձեռքերի, ծնկների կամ փորի վրա փոքրիկին փորիկի վրա պառկեցնելն ու մեջքը մերսելը ևս կարող է օգնել:
- Կարելի է երեխային գրկած քայլել կամ երեխային զբոսանքի տանել:
- Շատ երեխաների օգնում է լոգանքը:
- Մեղմ աղմուկը («սպիտակ աղմուկը»)՝ վարսահարդարիչի, հեռուստացույցի, փոշեկուլի համաչափ աղմուկը երբեմն հանգստացնում է:
- Որոշ կուրծք ուտող փոքրիկների օգնում է լացի ընթացքում կերակրելը կամ ծծակ տալը:
- Որոշ փոքրիկներ հանգստանում են շորերը հագած վիճակում մեծ կտորով ոտիկներն ու թաթիկները փաթաթելուց (ոչ թե ոտիկներն ուղղելով՝ ամուր բարուրելուց):

Ի՞ՆՉ ՉԱՆԵԼ

- Դեղորայք մի՛ տվեք:
- Բուսական եփուկներ (օր.սամիթի ջուր) մի՛ տվեք: Դրանք չեն օգնում:
- Թափահարված երեխայի համախտանիշից խուսափելու համար երեխային ուժգին մի՛ օրորեք:

  Եթե նյարդայնացած եք, երեխային փոխանցեք ընտանիքի այլ անդամի:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

WIGMORE